«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Իրինա Խաչատրյան

Մանկապարտեզ՝ «Հենզել և Գրետել մսուր-մանկապարտեզ»

ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1. Դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում 4
Գլուխ 2. Հետազոտական աշխատանք 8
2.1 Հետազոտության կազմակերպուման ընթացքը<արդյունքների վերլուծությունը.....8
2.2 Մեթոդական առաջարկություններ ավագ նախադպրոցականների խաղի կազմակերպման վերբերյալ. 12
Եզրակացություն.....14
Օգտագործած գրականության ցանկ 15

Ներածություն

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:Խաղի մասին խոսել են ինչպես հագեբաններ,այնպես էլ հայտնի մանկավարժներ՝ **Յ.Ա.Կոմենսկին, Ժ.Ժ.Ռուսոն, Ֆ.Ֆրյոբելը, Կ.Դ.Ուշինսկին**, **Խ.Աբովյանը, Ղ.Աղայանը, Հ.Թումանյանը, Առ.Բահաթրյանը, Ս.Արղությանը, Ս.Բաբայանը:**

Մեր հետազոտության ընթացքում մենք ներկայացրել ենք դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում,փորել ենք դիտարկել երեխաների խաղը,դուրս բերել այն հետաքրքիր դրսևորումները,որոնք երեխաները ցուցաբերում են դերային խաղերի ընթացքում:

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել ավագ նախադպրոցականների դերային խաղը, դուրս բերել դրանց առանձնահատկությունները՝ նմանություններն ու տարբերությունները:

Հետազոտության նպատակից բխել են մի քանի **խնդիրներ.**

- Ուսումնասիրել և մշակել խաղի վերաբերյալ մանկավարժական- մեթոդական գրականություն
- Դիտարկման քարտի միջոցով ուսումնասիրել երեխաների դերային խաղը
- Կատարել համապատասխան վերլուծություն

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, տեսական և գործնական հատվածներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ **Յ.Ա.Կոմենսկին, Ժ.Ժ.Ռուսոն, Ֆ.Ֆրյոբելը, Կ.Դ.Ուշինսկին**, ինչպես նաև խոշորագույն հայ մանկավարժներ և գրողներ՝ **Խ.Աբովյանը, Ղ.Աղայանը, Հ.Թումանյանը, Առ.Բահաթրյանը, Ս.Արղությանը, Ս.Բաբայանը** և այլոք: **Խ.Աբովյանը** հորդորում էր մանկավարժներին «*չզրկել երեխային անմեղ խաղերից*»: Իր «*Պարապ վախտի խաղալիք*» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկան խաղերի դերը: Մեծն **Հ.Թումանյանը** գտնում էր, որ խաղը երեխայի «*բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը*»: Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը, Հ.Թումանյանը մշակում է երեխաների համար հայրենագիտական խաղեր և վերլուծում դրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում: Հ.Թումանյանի կողմից մշակած խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում: Դրանցից են. «**Գույների խաղը**», «**Աստղերի խաղը**», «**Տառերի խաղը**», «**Հայկական առածների լոտո**» և այլ օրինակներ: Խաղի էությանն ու յուրահատկություններին անդրադարձել է հայ մանկավարժական մտքի խոշոր ներկայացուցիչ՝ **Ղ.Աղայանը**: Նա գտնում էր, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են վերարտադրել այդ իրենց խաղերում՝ ընդօրինակելով մեծահասակներին: Ղ.Աղայանը նկարագրում է տարբեր միջավայրերում ապրող երեխաների խաղերը և գալիս եզրակացության, որ դրանք արտացոլում են իրական կյանքը: Ղ.Աղայանը կյանքի է կոչում նախադպրոցականի դաստիարակության «**լավ երգի և խաղի**» սկզբունքը:

Հետաքրքիր են և չափազանց արժեքավոր նախադպրոցական դաստիարակության վառ ներկայացուցիչ, Թիֆլիսի ֆրյոբելյան մանկապարտեզի տնօրեն՝ **Առֆյա Բաբայանի** մանկավարժական մոտեցումները: Նա իր բազմաթիվ

հոդվածներում առանձնահատուկ կարևորում է խաղի դերը երեխայի զարգացման գործում և տալիս գործնական խորհուրդներ մանկավարժներին և ծնողներին երեխաների խաղը ճիշտ կազմակերպելու և ղեկավարելու համար: Ա.Բաբայանը գտնում էր, որ խաղը պահանջում է ամենայն ուշադրություն, լուրջ և նրբանկատ վերաբերմունք:

Խաղի հետաքրքիր վերլուծություն է անում հայ մանկավարժ-հոգեբան **Առ.Բահաթրյանը**, նշելով, որ ոչինչ չի կարող զարգանալ առանց գործողության, իսկ խաղը՝ երեխայի լավագույն գործողությունն է: Այն երեխաները, որոնք չեն խաղում, ըստ Ա.Բահաթրյանի, նման են, պարզապես, «ծերացած մանուկների»:

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել է խորհրդային հոգեբանության և մանկավարժության ականավոր գիտնականներ՝ **Լ.Ա.Վիգոտսկու, Ա.Լ.Ռուբինշտեյնի, Ա.Ն.Լեոնտևի, Դ.Բ.Էլկոնինի, Լ.Ա.Վենգերի, Դ.Բ.Մենջերիցկայայի, Ռ.Ի.Ժուկովսկայայի, Ա.Պ.Ուսովայի** և ուրիշների կողմից: Նրանք խաղը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնակատարելագործման կարևորագույն միջոց: Նշում են խաղային գործունեության պատմական ծագումն ու սոցիալական բնույթը:

Դերային խաղը նախադպրոցական տարիքի երեխաների համար ամենագրավիչ գործունեությունն է: Նրա գրավչությունը բացատրվում է նրանով, որ խաղի մեջ երեխան զգում է ազատության ներքին սուբյեկտիվ զգացողություն, առարկաների, գործողությունների, հարաբերությունների ենթակայություն իրեն, այն ամենը, ինչ պրակտիկ արդյունավետ գործունեության մեջ դիմադրություն է ցույց տալիս, դժվարությամբ է տրվում: Ներքին ազատության վիճակը կապված է խաղի սպեցիֆիկայի հետ՝ գործողությամբ երևակայական, պայմանական իրավիճակում: Սյուժետային խաղը երեխայից իրական ոչինչ չի պահանջում, նրանում ամեն ինչ պայմանական է, ամեն ինչ. «իբրև թե», «հատուկ արված»: Երեխան կարող է ներառվել իրեն հուզող իրադարձությունների մեջ, կարող է կրկնել «ապրել» այն իրադարձությունները, որոնցում նա չի կարողացել դրսևորել իրեն. Դրսևորել իրենց «որպես բժիշկ» և «բուժել հիվանդին»; լինել «նավապետ» և «լողալ գեով» և այլն:

Սյուժետային խաղի այս բոլոր «հնարավորությունները» ընդլայնում են նախադպրոցականի պրակտիկ աշխարհը և նրա համար ապահովում ներքին հուզական հարմարավետություն[1]:

Հոգեբանների և մանկավարժների կողմից հաստատվել է, որ նախ և առաջ խաղի մեջ զարգանում է երևակայության, պատկերավոր մտածողության ունակությունը: Խաղը նշանակություն ունի ոչ միայն երեխայի մտավոր զարգացման համար, այլև անձի զարգացման համար՝ խաղի մեջ ընդունելով տարբեր դերեր, վերստեղծելով մարդկանց արարքները՝ երեխան ներծծվում է նրանց զգացմունքներով և նպատակներով, ապրումակցում նրանց, սկսում է կողմնորոշվել մարդկանց միջև հարաբերություններում, յուրացնում այդ փոխգործողության կանոնները, ձեռք է բերում փոխըմբռնման փորձ, սովորում է պարզաբանել իր գործողությունները և մտադրությունները, համաձայնեցնել դրանք մյուս երեխաների հետ: Հենց խաղն է երեխային ընձեռում մեծահասակների կյանքի հուզականորեն հագեցած մուտք նրանց սոցիալական հարաբերությունների վերարտադրության հիման վրա, հնարավորություններ է ստեղծում երեխայի ինքնահաստատման և ինքնագնահատման համար: Խաղի մեջ երեխայի համար ավելի հեշտ է պատկերացվում հաջողության իրավիճակ ապրելու, հասակակիցների ընդունումը ստանալու հնարավորությունը: Խաղի ժամանակ երեխաների ուրախ ինքնազգացողությունը մանկական հասարակության կայացման կարևորագույն պայմանն է: Խաղի մեջ երեխան սկսում է գիտակցել իրեն որպես որոշակի կոլեկտիվի անդամ: Երեխաները սկսում են գնահատել միմյանց, ի հայտ է գալիս հասարակական կարծիք: Համապատասխանաբար, խաղի շնորհիվ մանկական խումբը զարգանում է որպես կոլեկտիվ[2]:

Այսպիսով, խաղի մեջ ակտիվ ձևավորվում է ուրիշի տեսակետին ուշադիր վերաբերելու, աշխահին նրա տեսանկյունից նայելու ունակությունը: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծվում մանկական եսակենտրոնությունը հաղթահարելու, սոցիալական զարգացման նոր աստիճանի անցնելու համար, քանի որ սյուժետա-

[1] Выготский Л. С. Игра и её роль в психическом развитии ребёнка.// Вопросы психологии. – 1966. №6. – с. 62-77
[2] Մարության Ս., Դալլաքյան Ա. Նախադպրոցական մանկավարժություն, Ե. Գասպրինտ 2008թ. 305էջ

դերային խաղի մեջ երեխան պետք է լինի զուգընկերոջ դիրքում, հաշվի առնի այն իր գործողություններում:

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

2.1 Հետազոտության կազմակերպման ընթացքը: Արդյունքների վերլուծությունը

Մեր հետազոտության մեջ ներկայացրել ենք դերային խաղերի արժեքը ավագ նախադպրոցականների խաղային հարաբերությունների ձևավորման գործում: Այդ նպատակով անց ենք կացրել հետազոտություն՝ 33 ավագ նախադպրոցականների հետ:

Հետազոտության **նպատակն է՝** պարզել դերային խաղի առանձնահատկությունները ազդեցությունը փորձարկվող ավագ նախադպրոցականների մոտ:

Հետազոտության **խնդիրները**.

1. Բացահայտել փորձարկվող խմբի ավագ նախադպրոցականների խաղային գործունեության առանձնահատկությունները/ Դ.Բ.Էլկոնին/[3]
2. Դիտման քարտի միջոցով պարզել ավագ նախադպրոցականների խաղերի բնույթը՝ դերային խաղի համատեքստում
3. Մշակել մեթոդական առաջարկներ՝ ուղղված դերային խաղերի ուղղորդմանը:

Ուսումնասիրելու համար ավագ նախադպրոցականների դերային խաղի բովանդակությունը, անցկացրել ենք դիտարկումներ ամբողջ խմբի հետ: Դիտարկման նպատակն էր ուսումնասիրել խմբի երեխաների խաղային գործունեության ուղղվածությունը: Դիտմանը մասնակցել են ավագ նախադպրոցական խմբի 33 երեխաները: Դիտման նպատակով իրականացրել ենք ավագ նախադպրոցականների խաղային գործունեության ուսումնասիրություն՝ ելնելով Դ. Է. Էլկոնինի առաջարկած խաղի կառուցվածքից, ըստ որի, կարելի է առանձնացնել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ խաղային ունակությունների հետևյալ ցուցանիշները.

1. Խաղի մտահղացումը

- Խաղի մտահղացուը շարունակելու ունակություն;
- Մտահղացումը խաղի ընթացքում զարգացնելու ունակություն;

[3] Эльконин Д. Б. Психология игры. – М.: Педагогика, 1978. с. 304

• Առարկայական-խաղային միջավայր ստեղծելու ունակություն (ատրիբուտների, փոխարինիչ առարկաների օգտագործում):

2. Խաղի սյուժեն

• Սյուժեն ընտրելու ունակություն

3.Դեր

• Դերի նշանակումը բառով;

• Երեխայի վարքագծի ուղղորդում դերով;

• Դերի բովանդակության համապատասխանություն կերպարի իրական վարքագծին;

• Երեխաների դերային գործառույթների փոխկապվածություն

4. **Դերային գործողություններ**

• Դերային գործողությունները խաղի զուգընկերոջ գործողությունների հետ համաձայնեցնելու ունակություն;

• Դերային գործողությունները կերպարի բնավորության հետ հարաբերակցելու ունակություն:

5. Դերային խոսք

• Դերային երկխոսություն կառուցելու ունակություն;

• Խաղային կերպարի ստեղծման համար բառային (ինտոնացիոն) և ոչ բանավոր (ժեստեր, դիմախաղ, շարժումներ) միջոցներ ընտրելու ունակություն:

Չափանիշները վերլուծելիս հիմք ենք ընդունել Տ.Ն.Դորոնովայի կողմից ներկայացված համակարգը, ըստ որի.[4]

Բարձր մակարդակ է համարվում, երբ երեխան.

Երեխան ունի բազմազան խաղային հետարքրություններ: Խաղերում նա նախաձեռնություն է դրսևորում: Հանդես է գալիս խաղային միջավայր ստեղծելու, սյուժեն, խաղային դերերը հարստացնելու առաջարկներով: Երևակայում է, համադրում է իրականը և երևակայականը խաղի մեջ: Հորինում է «շարունակությունով» խաղեր:, ակտիվ է դերային փոխազդեցության և դերային երկխոսություններում:

[4] Развитие игровой деятельности детей 2-8 лет. Методическое пособие. Карабанова О.А., Доронова Т.Н., Соловьёва Е.В. М.: 2015 - 64 с.

Բարյացկամ է հասակակիցների հանդեպ, հետաքրքրություն է ցուցաբերում մյուս երեխաների մտահղացումների հանդեպ: Խաղերին մասնակցում է ինչպես առաջատար, այնպես էլ այլ դերերում: Գիտի շատ շարժախաղեր և այլ խաղեր: Կանոնների պատրաստի պարունակությամբ խաղերում վերահսկում է մյուս խաղացողների գործողությունները, հաճույքով երեխաներին ծանոթացնում է խաղերին: Հորինում է խաղերի նոր տարբերակներ՝ կիրառելով իրեն հայտնի խաղերի տարբերակները:

Միջին մակարդակ

Երեխան հաճույքով մասնակցում է խաղերին: Ծավալում է տարբեր սյուժեներ: Խաղալիքները և առարկաներն ընտրում է դերին համապատասխան: Մասնակցում է խաղային միջավայրի ստեղծմանը: Անվանում է դերը և խաղի մյուս մասնակիցների դերերը: Գործում է ընդունած դերում, փորձու է փոխանցել ոչ միայն գործողությունների համակարգը, այլև խաղային կերպարի բնավորությունը: Մասնակցում է ծանոթ հեքիաթների մոտիվներով խաղերի սյուժեի ձևավորմանը: Դաստիարակի առաջարկով օգտագործում է դերերի բաշխման համընդհանուր եղանակներ վեճերի դեպքում (հաշվելուկներ, հերթականություն):

Ցածր մակարդակ.

Խաղերը միօրինակ են: Երեխան ձգտում է շաբլոնային խաղային սյուժեների և գործողությունների: Խաղային դերում քիչ արտահայտիչ է: Խոսքային ակտիվությունը նվազած է: Կողմնորոշված է խաղալիքների հետ միօրինակ գործողությունների կատարելուն: Դերային խաղացանկն աղքատ է: Համատեղ խաղերում դիտվում է խաղային փոխազդեցությունը ընդհանուր խաղային մտահղացման հետ համաձայնեցնելու անկարողություն: Մյուս խաղացողների առաջարկները սյուժեն փոխելու վերաբերյալ ընդունում է, սակայն դժվարանում է իր գործառույթները փոխելիս: Հաճախ թողնում է ընդհանուր խաղը մինչև դրա ավարտը: Քիչ խաղեր գիտի, դժվարանում է կանոնները բացատրելիս՝ տարվելով խաղի ընթացքով: Ինքնակարգավորման հնարավորությունները խաղային կանոնների տեսանկյունից պասիվ են:

Դիտարկման արդյունքներն արտահայտված են տրամագիր 1-ում.

Տրամագիր 1



Տրամագրի արդյունքերից երևում է, որ 33 ավագ նախադպրոցականներից.

1. Սոցիալ-մշակութային արժեքներ ցուցանիշում բարձր արդյունք ցուցաբերել է 22 երեխա, միջին արդյունք՝ 10 երեխա և ցածր արդյունք չի գրանցվել:
2. Խաղի մտահղացում ցուցանիշում ՝ 18 երեխա՝ բարձր,10 երեխա՝ միջին և 5 երեխա՝ ցածր արդյունք
3. Խաղի սյուժե ցուցանիշում՝ 27 երեխա՝ բարձր արդյունք, 1 երեխա միջին և 5 երեխա՝ ցածր արդյունք
4. Դեր ցուցանիշում՝ 21 երեխա՝ բարձր, 10 երեխա ցածր և 2 երեխա՝ միջին արդյունք
5. Դերային գործողություններ ցուցանիշում՝ 14 երեխա՝ բարձր արդյունք, 12՝ ցածր և 7 երեխա՝ միջին արդյունք
6. Դերային խոսք ցուցանիշում՝ 33 երեխաներն էլ ցուցաբերել են բարձր արդյունք:

2.2 Մեթոդական առաջարկություններ ավագ նախադպրոցականների խաղի կազմակերպման վերբերյալ.

Յուրաքանչյուր մանկավարժ կամ երեխային դաստիարակող մեծահասակ մշտապես պետք է իմանա և հաշվի առնի, որ խաղը նախադպրոցական տարիքում ոչ թէ ինքնանպատակ գործողություն է, որով «զբաղվում է» երեխան, այլ անփոխարինելի և առաջատար գործունեություն,որի արժեքն անգնահատելի է նախադպրոցականի համար: Ստորև ներկայցնում ենք մեթոդական որոշ խորհուրդներ,ըստ որոնց, երեխայի խաղի նպատակը պետք է լինի.

1. Հասարակության մեջ ընդունված նորմերի և արժեքների, այդ թվում ՝բարոյական արժեքների մասին երեխաների գիտելիքներրի հարստացումը, զարգացնել մարդասիրությունն ու փոխօգնությունը, նպատակասլացությունը, անկախության ձգտումը, սեփական գործողությունների կենտրոնացումը և ինքնակարգավորումը
2. Այս հատկությունների մասին երեխաների գիտելիքները հարստացնել դերային խաղերի կերպարների օրինակով
3. Սոցիալական և հուզական ինտելեկտի զարգացումը, բարեգործության և փոխադարձ օգնության մասին երեխաների գիտելիքներն ու գաղափարները խորացնել, տարբեր սյուժետադերային խաղերի օգնությամբ ներողամտություն դրսևորելու ունակության ձևավորում
4. Մեծահասակների և հասակակիցների հետ միասին աշխատելու պատրաստակամություն ձևավորելու, բանակցելու ունակությունը, կոնֆլիկտներ լուծելու կորողությունը կարող է հանգեցնել մարդասիրական հատկությունների ձևավորմանը:
5. Ձևավորել դերային փոփոխություն իրականցնելու կարողությունը՝ համապատասխանեցնելով խաղընկերոջ սեռային պատկանելությանը. կարողանալ փոխել դերը խաղի ընթացքի փոփոխման զուգընթաց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագ խմբերի երեխաները կարող են դեր վերցնել խաղից առաջ և կառուցել իրենց վարքագիծը դերին հետևելով, դաստիարակը հանդես է գալիս որպես ուշադիր դիտորդ, և ելնելով խաղերի սյուժեից որպես ակտիվ

մասնակից, անուղղակիորեն ղեկավարում է խաղը, եթե խաղը կարծրատիպային է (առաջարկում է նոր գաղափարներ և առաջարկում է երեխաներին քննարկել այլ տարբերակներ):

Խաղային գործունեության զարգացման նպատակով ստեղծվել են պայմաններ (առարկայական զարգացնող միջավայր,դրա անընդհատ թարմացում, ըստ երեխաների հետաքրքրությունների և նախաձեռնությունների): Ապահովել անուղղակի օգնություն՝ կախված խաղային իրավիճակներից, որոնցում օրվա իրադարձությունները արտացոլված են խաղի մեջ: Խաղային միջավայրը պետք է լինի բավական ճկուն է և հեշտ կերպարանափոխվում է:Այդ գործընթացին պետք է ակտիվ մասնակցեն նաև երեխաները:Օրինակ՝ բավական հաճախ կարելի է փոփոխել կամ համալրել «Հիվանդանոց», «Ավտոտնակ», «Վարսավիրանոց», «Խանութ», «Դեղատուն»,«Գյուղում» սյուժետադերային խաղերի կահավորանքը և խաղալիքները: Խաղերն ու խաղալիքները կարելի է վերափոխել այնպես, որ դրանք նպաստեն երեխաների ազգային, մշակութային արժեքների ձևավորմանը:

Եզրակացություն

Հետազոտության մեջ դիտարկվել է սյուժետադերային խաղի սպեցիֆիկան՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների երևակայության և պատկերավոր մտածողության զարգացման գործոն:

Հետազոտության նպատակին համաձայն դիտարկվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարարական աշխատանքներով ստուգվել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-մշակութային արժեքների ձևավորմանն ուղղված մեթոդական առաջարկությունների նմուշ-օրինակ:

Նշված նպատակին հասնելու համար լուծվել են մի շարք խնդիրներ՝ երեխան սկսում է գիտակցել իրեն որպես որոշակի կոլեկտիվի անդամ, երեխաները սկսում են գնահատել միմյանց, ի հայտ է գալիս հասարակական կարծիք, հետևաբար խաղի շնորհիվ մանկական խումբը զարգանում է որպես կոլեկտիվ:

Այսպիսով խաղի մեջ ակտիվ ձևավորվում է ուրիշի տեսակետին ուշադիր վերաբերվելու, աշխարհին նրա տեսանկյունից նայելու ունակությունը: Դրանով հնարավորություն է ստեղծվում մանկական եսակենտրոնությունը հաղթահարելու սոցիալական զարգացման նոր աստիճանի անցնելու համար, քանի որ դերային խաղում երեխան պետք է լինի զուգընկերոջ դիրքում, հաշվի առնի այն իր գործողություններում:

Յուրաքանչյուր մանկավարժ կամ երեխայի դաստիարակող մեծահասակ մշտապես պետք է իմանա և հաշվի առնի որ խաղը նախադպրոցական տարիքում ոչ թե ինքնանպատակ գործողություն է այլ անփոխարինելի և առաջատար գործունեություն:

Օգտագործած գրականության ցանկ

1. Մարության Ս., Դալլաքյան Ա. Նախադպրոցական մանկավարժություն, Ե. Գասպրինտ 2008թ. 305էջ
2. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, /5-6 տարեկանների համար/, Երևան 2007թ.
3. Выготский Л. С. Игра и её роль в психическом развитии ребёнка.// Вопросы психологии. – 1966. №6. – с. 62-77
4. Развитие игровой деятельности детей 2-8 лет. Методическое пособие. *Карабанова О.А., Доронова Т.Н., Соловьёва Е.В.* М.: 2015 - 64 с.
5. Эльконин Д. Б. Психология игры. – М.: Педагогика, 1978. с. 304
6. http://world.lib.ru/k/kim_german_nikolaewich/4030-3.shtml
7. http://www.voppsy.ru/issues/1985/852/852163.htm